# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<< 16 >> ապրիլի 2014 թվականի N 78-Ա քաղաք Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ և 1.23-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման» կարգի 5-րդ կետի և 7-րդ կետի «զ» ենթակետի դրույթները, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2014 թվականի հունիսի 19–ից 20-ը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավի դեպքում» թեմայով:

2. Ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծել՝

1) ուսումնավարժության ղեկավարման խումբ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ուսումնավարժության միջնորդական խումբ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանման հանձնաժողովը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի՝

ա. առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը,

բ. ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը,

գ. քաղաքաշինության վարչությունը,

դ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ, Նոր Կյանք և Անուշավան համայնքները.

6) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության Ախուրյան գետավազանի ջրաբանական կայանը.

7) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային կենտրոնը.

8) «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոն-Արևմտյան» տարածքային մասնաճյուղի «Արթիկ» տեղամասը.

9) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

10) «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության հյուսիսային տարածքային կենտրոնը.

11) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը.

12) Արթիկի «Ճանշին» փակ բաժնետիրական ընկերությունը:

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին՝

ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Մարատ Սարիբեկյանին՝

1) մինչև 2014 թվականի մայիսի 19-ը կազմել և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումանավարժության նախապատրաստման և անցկացման փասթաթղթերի փաթեթը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը ուսումնավարժության անցկացմանը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի, մասնակիցներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն

3) 2014 թվականի հունիսի 16-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործելու» պլանով նախատեսված միջոցառումների և փոխգործողությունների պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով,

2) գործնական միջոցառումների ընթացքում պահպանել անվտանգության կանոնները,

3) ուսումնավարժության ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնել համապատասխան զեկույցներ:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սամվել Գրիգորյանին՝

ապահովել ուսումնավարժության լուսաբանումը:

8. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Իսկականի հետ ճիշտ է՝

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 16 Ի ԹԻՎ 78-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Կ Ա Զ Մ
## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՑ 20-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

| Հ/Հ | Անուն, Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1. | Ֆելիքս Ցոլակյան | ՀՀ Շիրակի մարզպետ՝ ուսումնավարժության ղեկավար |
| 2. | Սեյրան Պետրոսյան | ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ՝ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ |
| 3. | Մարատ Սարիբեկյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ |

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 16 Ի ԹԻՎ 78-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Կ Ա Զ Մ
## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՑ 20-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| Հ/Հ | Անուն, Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1. | Մարատ Սարիբեկյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ |
| 2. | Մարտին Մկոյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ի պետ, Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ ՀՇՈՒ-ն խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար |
| 3. | Կարեն Եղշատյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ապահովման հարցերով պետի տեղակալ՝ ՀՇՈՒ-ն գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար |
| 4. | Էդիկ Սարոյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ի ավագ հրահանգիչ՝ ՀՇՈՒ-ն խաղարկման և վերլուծման խմբի անդամ |
| 5. | Ռուսլան Հարությունյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ի ավագ հրահանգիչ՝ ՀՇՈՒ-ն խաղարկման և վերլուծման խմբի անդամ |
| 6. | Արթուր Ավետիսյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության Արթիկի ՀՓՋ հրամանատար՝ ՀՇՈՒ-ն գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ |
| 7. | Արսեն Ադամյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության Արթիկի ՀՓՋ հրամանատարի տեղակալ՝ ՀՇՈՒ-ն գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ |
| 8. | Հայկ Պետրոսյան | Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ի ավագ հրահանգիչ՝ ՀՇՈՒ-ն գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ |

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 16 Ի ԹԻՎ 78-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Կ Ա Զ Մ
## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՑ 20-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

| Հ/Հ | ՈՒսումնավարժության մասնակիցներ | Միջնորդներ | |
|---|---|---|---|
| | | Զբաղեցրած պաշտոնը | Անուն, Ազգանուն |
| 1. | ՀՀ Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության, քաղաքաշինության վարչություններ | Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ բնակչության պաշտպանության բաժնի պետ, խմբի ղեկավար | Լևոն Հովսեփյան |
| 2. | ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, «ԱրմենՏել» ՓԲԸ հյուսիսային տարածքային կենտրոն | Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, խմբի անդամ | Սուրեն Գրիգորյան |
| 3. | ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ կազմակերպության Շիրակի մարզային կենտրոն, Արթիկի «Ճանշին» ՓԲԸ | Շիրակի մարզային փրկարարական Վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Յուրիկ Հակոբյան |
| 4. | ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչութուն. Շիրակի մարզի Փանիկ, Նոր Կյանք և Անուշավան համայնքներ | Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Էմմա Ներսիսյան |
| 5. | «Հայ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ կենտրոն արևմտյան տարածքային մասնաճյուղի «Արթիկ» տեղամաս, ՀՀ ԱԻՆ Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության Ախուրյան գետավազանի ջրաբանական կայան | Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ օպերատիվ հերթապահ, հերթափոխի ավագ հրահանգիչ, խմբի անդամ | Համլետ Ղազարյան |
| 6. | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության Ախուրյան գետավազանի ջրաբանական կայան, ՀՀ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրու գծային կայարանային միավորում | Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ օպերատիվ հերթապահ, հերթափոխի ավագ հրահանգիչ, խմբի անդամ | Էդվարդ Սարոյան |
| 7. | ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Շիրակի ԳԳՄ«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղ | Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ խմբի անդամ | Սերգեյ Դավոյան |

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ